Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՄԻ ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՍՈՒՆՔ ԷԼ

Կենտրոնում գրականագետ-բանասեր, բանասիրական գիտությունների թեկնածու (այն ժամանակ) Արամ Ինճիկյանն է՝ շրջապատված ինստիտուտի մի քանի գործընկերներով: Համակ ուշադրություն դարձած, նա կենտրոնացած լսում է, ասես աշխատելով բաց չթողնել և ոչ մի բառ ու արտահայտություն: Ամեն ինչ՝ թե՛ հավաքված, պիրկ բերանը՝ շեշտված ու կամային ծնոտով, թե՛ ընդգծված սևություն ունեցող աչքերի նպատակադիր, ասես մի կետի բևեռված հայացքը, թե՛ ալիքաձև մազերի ամփոփ գանգուրները, հիանալի կերպով ի մի են բերված հիմնական նպատակի՝ կենտրոնացած լսելու գաղափար-մտադրությթը ավելի որոշակի ու ռելիեֆ արտահայտելու համար: Աշխատանքը մատիտանկար է, իրականացված է կարմիր և սև գույների գեղեցիկ համադրությամբ, հեղինակն է Մարտիրոս Սարյանը, չափերն են՝ 15x21: Մատիտանկարը գրականագետի դստեր՝ Արմենուհի Ինճիկյանի անձնական սեփականությունն է և հրապարակվում է առաջին անգամ:

Շնորհակալություն հայտնելով Արմենուհի Ինճիկյանին մատիտանկարի հրատարակությունը թույլատրելու համար, հավելենք, որ բավականին ուշագրավ է և վարպետի աշխատանքային ոճի տեսակետից ուսանելի նրա ստեղծման պատմությունը, որը կարծում ենք, կարող է հետաքրքրել թերթի ընթերցողներին:

* * *

Իրադարձությունները ծայր առան 1957 թվականի կեսերից, երբ ինձ՝ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նորընծա աշխատակցիս, իր առանձնասենյակ կանչեց ինստիտուտի դիրեկտոր Գուրգեն Հովնանը և հանձնարարեց.

- Ինչպես գիտես, Մարտիրոս Սերգեյիչը ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է: Բայց նա առաջացած տարիք ունի և անհրաժեշտ է, որ մերոնցից մեկը գիտխորհրդի օրերին նրան տնից ուղեկցի ինստիտուտ, նիստից հետո էլ՝ տուն: Որպես երիտասարդի, այդ գործը հանձնարարվում է քեզ:

Ես սիրով հանձն առա այդ պարտականությունը, և այդ ժամանակաշրջանից սկսած, դարձա Մարտիրոս Սարյանի հաստատուն «թիկնապահը»: Ինչի մասին էինք խոսում ճանապարհին քայլելիս (ավտոմեքենայով գնալը Վարպետը մերժեց կտրուկ և մեկընդմիշտ),

առանձին հարց է, որին պատեհ առիթով դեռ անդրադառնալու եմ։ Այստեղ նշեմ միայն, որ ես քիչ եմ հանդիպել ամեն երևույթի ու իրադարձության նկատմամբ այնպիսի անմիջական ու հախուռն վերաբերմունք ցույց տվող անհատականության, ինչպիսին Մարտիրոս Սարյանն էր։

Դեպքերը տարբեր էին. մի անգամ զայրացած կանգնեց մրցումներ ազդարարող և սպորտային համազգեստով աղջիկներ պատկերված ինչ-որ աֆիշի առջև («Ի՞նչ է, ֆիզկուլտուրան արտահայտվում է միայն տգեղ դիրքով կանգնած աղջիկ պատկերելո՞վ։ ՈՒրիշ միտք չէ՞ին կարող նկարել»), մեկ այլ դեպքում՝ չթաքցրած հիացմունքով մոտեցավ սայլին լծված երկու գոմեշներին, քննաբար ու երկար նայեց, նույնիսկ ձեռքով շոյեց նրանցից մեկի գավակը («Ի՜նչ ուժ է, հանդարտ, հանգիստ ուժ. շատ կուզենայի գոմեշ նկարել, այս ծալ-ծալ ուժը շեշտելու համար»), կամ՝ ձեռնափայտով սպառնաց իրեն անպարկեշտ պահող մի պատանու («Դու ընտանիքում ես մեծացե՞լ, այ տղա, թե՞ որբանոցում») և սպառնաց, որ հենց հիմա միլիցիա կկանչի։ Գորովալից խանդաղատանքով կանգնում էր նորաբողբոջ դեղձենու առջև, գուրգուրում էր ծառի բույնը, ձգույշ, շատ զգույշ ձեռք էր տալիս ծաղիկներին («Նայիր, պտղաբերում է, ամենամեծ արարչությունն է սա, չէ՞ որ սա էլ մայր է. բնությունն այնքան անթերի է ու կատարյալ, որ զարմանում-մնում եմ») և այլն։ Դեպքեր կարող եմ վերհիշել անսահման քանակությամբ։

Գիտխորհրդի կամ ինստիտուտի այլևայլ նիստերին Սարյանը մշտապես նստում էր նույն տեղում՝ պատի տակ դրված բազմոցի վրա, որը մենք կես կատակ, կես լուրջ անվանում էինք «Սարյանի օթոց»։

Չնայած նրան, որ ընդհանրապես ելույթ չէր ունենում, բայց ընդմիջումների ժամանակ քննարկվող խոսակցություններից ակնհայտ էր դառնում, որ ոչ միայն ուշադրությամբ լսել է բոլոր արտահայտվածներին, այլև նրանց այս կամ այն մտքի, դատողության կամ տեսակետի վերաբերյալ հայտնում էր իր միանգամայն անկրկնելի, հաճախ էլ կտրուկ կարծիքները։

1958 թ. կեսերից հանրապետությունն սկսեց եռանդագին պատրաստվել հայ գրականության դասականի՝ Ալեքսանդր Շիրվանզադեի ծննդյան հարյուրամյա հոբելյանի հանդիսություններին։ Ի թիվս պետական-կառավարական այլևայլ միջոցառումների, որոնք, ի դեպ, անցկացվեցին մեծ շուքով, Գրականության ինստիտուտն էլ որոշեց այդ կապակցությամբ գիտական նստաշրջան կազմակերպել, որը տեղի էր ունենալու նոյեմբերի 18-ին, որտեղ, ի դեպ, «Շիրվանզադեն նովելիստ» թեմայով զեկուցումով հանդես էր գալու նաև Վարպետի որդին՝ բանասիրական գիտությունների թեկնածու Սարիկ Սարյանը։

Նշանակված օրը ժամը 7-ին ինստիտուտի դահլիճում աստիճանաբար սկսեցին հավաքվել աշխատակիցներն ու հրավիրված հյուրերը: Եկավ և Արամ Ինճիկյանը, իր մշտական հաճելի ժպիտը դեմքին, աջ ու ձախ բարևեց ներկաներին և նստեց ծայրի աթոռներից մեկի վրա: Ինչպես միշտ՝ Մարտիրոս Սարյանի մուտքն ուղեկցվեց հիացմունքի շշուկներով ու ծափերով: Օգնեցի Վարպետին նստել և հարմար տեղավորվել «Սարյան օթոցին» և ինքս էլ տեղավորվեցի նրա կողքին: Դիրեկտոր Գուրգեն Հովնանի բացման հակիրճ խոսքով, Շիրվանզադեին նվիրված ինստիտուտի գիտական նստաշրջանն սկսեց իր աշխատանքները:

Առաջին զեկուցումը (զեկուցող՝ Ս. Սարինյան) վերջանալու մոտ էր, երբ նկատեցի, որ Մարտիրոս Սարյանի հայացքը, որը տեղից տեղ անցնելով «թափառում էր» դահլիճում, հանկարծ կանգ առավ, ապա բևեռվեց դահլիճում նստած Ինճիկյանի վրա: Մի քանի վայրկյան այդ հայացքն ասես «խուզարկեց» Ինճիկյանին, ըստ ամենայնի տնտղեց նրան, ապա Սարյանը ծոցագրպանից հանեց սովորական մեծության մի ծոցատետր, հանդարտ բաց արեց, հանեց վեց գույն ունեցող աշակերտական նկարչական մատիտների սովորական մի տուփ, անշտապ այդ էլ բացեց, այդ բոլորը մի տեսակ հարմարեցնելով, դասավորեց ձախ ձեռքին ու զոգին և սկսեց...

Ավելի մոտ նստեցի Վարպետին, զգալով, որ հիմա պիտի տեսնեմ այնպիսի մի բան, որ հավանորեն այլևս երբեք չեմ տեսնելու (ի դեպ՝ այդպես էլ եղավ). պիտի տեսնեմ մեծ Արարումը: Եվ կծկվեցի տեղումս, աշխատելով չխանգարել, չշարժվել, ուշադրություն չգրավել, եթե հնարավոր է, նույնիսկ չշնչել:

Չգիտեմ ինչու կարծում էի, որ արարման այդ գործողությունը մեծապես ուղեկցվում է հախուռն շարժումներով, որի անհրաժեշտ լրացումներն են կազմում աչքերի տիրական կկոցումները, դեմքի մկանների կծկումները, և որի ընթացքում արնոտվելու չափ կրծոտվում են ներքին հուզումից առանց այն էլ պրկված ու դողացող շրթունքները: Համենայն դեպս նման նկարագրություններ մեկից ավելի անգամ եմ կարդացել մեծ նկարիչների կենսագրություններում և տեսել նրանց նվիրված կինոնկարներում: Տվյալ դեպքում, սակայն, բոլորովին էլ այդպես չէր: Վարպետն աշխատում էր առանց շտապելու, հանգիստ ու «մշմշալով», մի տեսակ՝ «խորհում էր» ամեն նոր գիծը քաշելիս, երբեմն մատիտի ծայրը շրթունքներին տանելով՝ դիտում-քննում էր նոր նկարածը, դուր չեկած գիծը ձեռքի փոքրիկ-կարճ շարժումներով ջնջում էր ռետինով (ռետինը գտնվում էր մատիտների տուփի մեջ), նույնպես անշտապ փոփոխում էր գունավոր մատիտները, ամեն մեկը օգտագործելուց հետո դնելով ճիշտ այն տեղում, որտեղից հանել էր: Աշխատանքն ընթանում էր այնպես հանգիստ ու խաղաղ, որ կողմնակի դիտողին կթվար (և այդպես էլ թվացել

էր շատերին), որ Սարյանը «հենց այնպես» մատիտ էր խաղացնում թղթի վրա։ Իրեն օրինակելի էր պահում նաև «բնորդը»՝ Արամ Ինճիկյանը։ Դեռ սկզբից իսկ նա կռահեց, որ Վարպետը «զբաղված է» իրենով և ամբողջ ժամանակ նստած էր նախանձելիորեն անշարժ ու անփոփոխ։ Մի կողմ մնաց Շիրվանզադեին նվիրված հոբելյանական նստաշրջանը, կամ կարդացվող զեկուցումներին ունկնդրելը։ Ամբողջ դահլիճն ընդհանուր առմամբ, իսկ Սարյանի շրջապատում եղողները մասնավորապես հետևում էին աշխատող Վարպետին. մի բան, որից, ի դեպ, նա, հակառակ իմ սպասածին, ոչ միայն տհաճություն կամ անբավականություն էր հայտնում, այլ կարծես ինքն էլ գոհ էր դրանից։

Նստաշրջանն ավարտված-չավարտված, բոլորը խմբվեցին Մարտիրոս Սարյանի շուրջը։

- Վարպես, եթե կարելի է՝ տեսնենք։

- Վարպետ, ցույց տվեք ձեր նկարածը։

Չմերժեց։ Մեղմիկ ժպտալով՝ բոլորին ցույց տվեց իր մատիտանկարը, ամեն ոոպե համեստորեն հավելելով, որ «մի բան չի», «լավ չի», «դեռ վրան աշխատելու կարիք կա»։ Հուզված-անհանգիստ էր նաև Արամ Ինճիկյանը, որը պարզապես չէր թաքցնում իր ուրախությունը։ Ախ, ինչ նախանձով էի ես նայում նրան...

- Վարպետ, նկարը պետք է մակագրել, – հուշեց ինչ-որ մեկը։

Սարյանի դեմքին մի տեսակ անօգնական ժպիտ երևաց։

- Է՛, պիտի գրեմ, – նա օրորեց գլուխը, – ախր գրել շատ եմ դժվարանում։ Նկարել՝ ոչինչ, կարծես թե մի բան ստացվում է, իսկ գրել...,- նա դարձավ բոլորիս, – Լսեք, դուք ինչպես եք կարողանում այդքան շատ գրել։

Մենք ծիծաղեցինք։

Ծնկի վրա հարմարացնելով նկարը՝ Մարտիրոս Սարյանը դարձյալ հանգիստ ու անշտապ գրեց. «Ինստիտուտի ժողովում Արամ Ինճիկյանը լսում է իր ընկերների հետ»։

Վերջացնելուց հետո թեթևացած շունչ քաշեց, ժպտալով նայեց բոլորիս.

- Էհ պրծա, լավ գրեցի, չէ՞։

Մենք դարձյալ ծիծաղեցինք։

Չնայած Ինճիկյանի խնդրանքին, Սարյանը մատիտանկարն այդ օրը չտվեց նրան։ Այդ «սևագրության» հենքի վրա նա ստեղծեց իր «Արամ Ինճիկյան» հրաշալի դիմանկարը, որն այժմ ցուցադրվում է նրա տուն-թանգարանում։ Միայն 1974 թ. կեսերին Վարպետի կնոջ՝ Լյուսյա Սարյանի՝ «Մեր ընտանիքի սիրելի Արամ Ինճիկյանին» մակագրությամբ մատիտանկարը հանձնվեց «տիրոջը»։

Այսպիսին է վերոհիշյալ մասունքի փոքրիկ և, կարծում եմ, հետաքրքրական պատմությունը...

Երեկոյան Երևան, 1980 թ., ապրիլի 5, № 82